

Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր

Ամսաթիվ՝

02 հոկտեմբերի 2013թ.

Վարկի համար՝

2993 – ARM, Հյուսիս- հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3

Պայմանագրի համարը և անունը՝

Պայմանագիր 03-CS-001 Տրանշ 3-ի շինարարական վերահսկողության և Տրանշ 4-ի տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախնական նախագծման և մոտ 60կմ-ի մանրամասն նախագծման համար խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման

Հայտի ներկայացման վերջնաժամկետ՝ 01 նոյեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հատուկ ֆոնդի միջոցներից՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման համար, և մտադիր է գումարի մի մասը հատկացնել 03-CS-001 պայմանագրով նախատեսված համապատասխան վճարումները կատարելու համար: ԱԶԲ-ի պայմանագրի և վճարումների պայմաններն ու ժամկետները ելքակա կլինեն վարկի պայմաններին և ժամկետներին, այդ թվում ԱԶԲ-ի և իր վարկառուների կողմից խորհրդատուների կիրառման ուղեցույցներին: Ոչ մի այլ երրորդ կողմ, բացի ՀՀ կառավարությունից, վարկի գումարի նկատմամբ չի կարող որևէ իրավունք ունենալ կամ պահանջ ներկայացնել, բացառությամբ ԱԶԲ-ի կողմից հատուկ համաձայնության դեպքերի:

Ծրագիրը ֆինանսավորվելու է ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության կողմից համատեղ:

Խորհրդատու՝

«Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը նախատեսում է վարձել խորհրդատու, որը կաջակցի ծրագրի իրականացմանը, հետևյալ նպատակով՝

- Տրանշ 3-ի Թալին-Լանջիկ (Մ1 մայրուղու կմ71+500-ից մինչև կմ89+750, 18.7կմ) ճանապարհահատվածի շինարարության վերահսկողություն:
- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի հարավային հատվածի՝ Արտաշատ-Քաջարան (Մ2 մայրուղու կմ28+912-ից մինչև կմ333+000, մոտ 304կմ) ճանապարհահատվածի համար տեխնիկատնտեսական ուսումնասիրություն:
- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի հարավային հատվածի՝ Արտաշատ-Քաջարան (Մ2 մայրուղու կմ28+912-ից մինչև կմ333+000, մոտ 304կմ) ճանապարհահատվածի համար նախնական նախագծային փաստաթղթերի մշակում:
- FIDIC MDB 2010 պայմանագրի պայմանների շրջանակներում վերջնական նախագծի, մրցութային փաստաթղթերի և բոլոր այլ անհրաժեշտ փաստաթղթերի մշակում վերը նշված հատվածից առանձնացված մոտ 60կմ երկարությամբ ճանապարհահատվածի համար: Նշված ճանապարհահատվածի ընտրությունը, ըստ տեխնիկատնտեսական ուսումնասիրության և նախնական նախագծի տվյալների արդյունքների, պետք է նախապես ընդունվի ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից, որը կառաջադրվի ՀՀ կառավարության վերջնական հաստատմանը,
- Վերը նշված մոտ 60կմ երկարությամբ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում Խորհրդատուն պետք է հասանելի լինի Տրանշ 4-ի շինաշխատանքների առաջին 6 ամիսների ընթացքում պարզաբանելու համար մանրամասն նախագծին վերաբերող բոլոր հարցերը, որոնք կբարձրացվեն Տրանշ 4-ի շինաշխատանքներն իրականացնող կապալառուի և/կամ Վերահսկող խորհրդատուի կողմից (առկայության դեպքում):
- Տրանշ 4-ի համար Ասիական զարգացման Բանկի (ԱԶԲ) համար ընդունելի Պարբերական ֆինանսավորման հայտի (ՊՖՀ) մշակում:

Ընտրության եղանակը՝ Որակի և գնի վրա հիմնված ընտրություն (90/10)

Պայմանագրի տեսակը` Միանվագ և Ժամանակի վրա հիմնված (70/30)

Առավելագույն քուջեն` 7,109,850 (յոթ միլիոն հարյուր ինը հազար ութ հարյուր հիսուն) ԱՄՆ դոլար

Առաջադրանքի իրականացման տևողությունը` 39 ամիս

Մասնագիտական անձնակազմի ներգրավում`

- **Միջազգային մասնագետներ** – 137 մ/ա
- **Տեղական մասնագետներ** – 426 մ/ա

Սկիզբը` Մարտ 2014թ.

Ավարտը` Մայիս 2017թ.

Խորհրդատուների տեսակ` Միջազգային կազմակերպություն

Փաստաթղթերի հանձնման կարգ`

Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ծանուցմանը, ներառյալ Տեխնիկական մասնագրերի ու նախնական նախահաշվի, ինչպես նաև Հետաքրքրության Հայտի ձևին և այլ վերաբերող տեղեկատվությանը հետաքրքրված թեկնածուները կարող են ծանոթանալ և ներբեռնել ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի հետևյալ ինտերնետային կայքից` <http://www.cms.adb.org>:

Հայտերի ներկայացում`

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով` <http://www.cms.adb.org> ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի միջոցով, ոչ ուշ, քան նշված է Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ծանուցմամբ (**01 նոյեմբերի 2013թ.**).

Կազմակերպության անվանումը` «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ:

Հասցեն` ՀՀ. Երևան 0002, Թումանյան փողոց, թիվ 38 շենք:

Հեռախոս` (+37460) 50-68-70 (-71,-73)

Հարցերի համար դիմել` Կարինե Աբրահամյանին: